Հաստատված է
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2021 թվականի ապրիլի 27-ի
N37-Ա որոշմամբ

# Հ Ա Յ Տ

## Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

| | |
|---|---|
| Ծրագրի անվանումը | Գորիսից Ակներ բնակավայր տանող մոտեցման երկրորդ գլխավոր ճանապարհի հիմնանորոգում |
| Մարզը | ՀՀ Սյունիքի մարզ |
| Համայնքը | Գորիս խոշորացված համայնք: Բնակավայրերը՝ Խնձորեսկ, Ներքին Խնձորեսկ, Հարթաշեն, Վերիշեն, Ակներ, Որոտան, Քարահունջ, Շուռնուխ, Բարձրավան: |
| Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից | Ակներ բնակավայրը Գորիսից 2 կմ հեռավորության վրա է գտնվում: Համայնքի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից՝ 240 կմ, մարզկենտրոն Կապանից՝ 67 կմ: |
| Համայնքի գլխավոր հատակագծի առկայությունը | Համայնքն ունի կադաստրային քարտեզ, որը գյուղական բնակավայրերի համար հանդիսանում է գլխավոր հատակագիծ: Հատակագիծը հաստատվել է 2002 թվականին: |
| Համայնքի /բնակավայրի բնակչությունը | Բնակավայր իբնակչությունը՝ 1119 մարդ: |
| Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայր | Գորիս համայնքը սահմանամերձ է |
| Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ և հստակ տեղեկատվություն | Բնակավայրն ունի 80 տոկոս լուսավորության ծածկույթ, գազաֆիկացված է: Իրականացվում է կանոնավոր աղբահանություն: |

| | |
|---|---|
| Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը | ➢ Ակներ բնակավայրը Գորիս քաղաքին կապվում է Վերիշեն բնակավայրի միջոցով, մինչդեռ բնակավայրը քաղաքին կապող ուղիղ ճանապարհ ևս առկա է, բայց քանի որ այն անանցանելի է , չի գործում: Բնակավայրը տնտեսական նշանակություն ունի , քանի որ առկա են արտադրական ընկերություններ, Ակներում է գործում համայնքում ամենամեծ կաթնամթերք արտադրող «էլոլա» ընկերությունը, ալրաղացը և այլ կարևոր նշանակության ձեռնարկություններ:<br>➢ Հաշվի առնելով, որ բնակավայրը համայնքի տնտեսական զարգացման տեսանկյունից կարևոր նշանակություն ունի, մյուս կողմից բնակավայրում համեմատաբար ավելի քիչ ներդրումային ու կապիտալ ծրագրեր են իրականացվել, անհրաժեշտություն է առաջանում լուծել բնակավայրի ուղիղ կապով Գորիսին միացնելու հարցը:<br>➢ 2020 թվականին Գորիսից մինչ բնակավայրի մուտքը հասնող և միջպետական ճանապարհը հատող հատվածը հիմնովին նորոգվել է, որը նախկինում չէր գործում, սակայն ռազմավարական և տնտեսական նշանակություն ունի, քանի որ հատվում է Մ12 մայրուղում, նպատակահարմար է, որ այս տարի ճանապարհի դեպի Ակներ բնակավայր մտնող հատվածը ևս հիմնովին նորոգել:<br><br>Ակներ բնակավայրն այժմ ևս սահմանամերձ է և անհրաժեշտ է ներդրումներ իրականացնել բնակավայրի ենթակառուցվածքների, ճանապարհային ցանցի բարելավման միջոցով խթանել բնակավայրի տնտեսական հնարավորությունները: |
| Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին | ➢ Լուծվել է բնակավայրը Գորիս քաղաքին ուղիղ կապով միանալու կարևոր խնդիրը:<br>➢ Բնակավայրում գործող խոշոր ձեռնարկությունների տնտեսական հնարավորությունները ավելացել են՝ ճանապարհի պատճառով առաջացող լրածուցիչ ծախսերը՝ նվազել:<br>➢ Բնակավայրը դարձել է ներդրումների համար առավել մրցունակ:<br>➢ Բնակավայրի բնակիչների համար կենսական նշանակության խնդիր է լուծվել, Գորիս քաղաքի հետ կապն ավելի է հեշտացել: |
| Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները | • Կարևոր նշանակության ճանապարհի հիմնանորոգում<br>• Նախագծանախահաշվային աշխատանքների իրականացում<br>• Գնման գործընթացի կազմակերպում<br>• Շինարարական աշխատանքների կազմակերպում<br><br>❖ Ճանապարհի ասֆալտապատում /890գծմ/10620քմ<br>❖ Բազալտե եզրաքարերի տեղադրում և ոռոգման առուների վերակառուցում /2670 գծմ/<br>❖ Հենապատերի կառուցում /85,8 խմ/<br>❖ «Կանաչ գոտու» ստեղծում՝ ծառատնկում |

| | |
|---|---|
| | ❖ Արտաքին լուսավորության ցանցի կառուցում/ 890գծմ , 30 հատ լուսավորության սյուներ և LED լուսատուներ<br><br>Ճանապարհի հանձնում և համայնքի բյուջեով պահպանման ծախսերի նախատեսում: |
| Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի | Բարելավվող ենթակառուցվածքները համայնքային սեփականություն են և կընդգրկվեն հիմնական միջոցների հաշվեկշռում: |
| Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա | Շահառուների քանակը<br><br>▪ Առաջնային շահառուները բնակավայրի բնակչությունն է:<br><br>▪ Ստեղծվել է հնարավորություն բնակավայրի փողոցների տնտեսական հնարավորությունների խթանման համար:<br><br>▪ Բնակավայրում գործող խոշոր ընկերությունների տնտեսական հնարավորությունն ավելացել է՝ նպաստելով նոր աշխատատեղերի ստեղծմանը:<br><br>▪ Բնակավայրի համար կենսական նշանակության խնդիրը լուծվել է: |
| Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական աշխատատեղերի | Ծրագրի իրականացման ընթացքում<br><br>✓ Ծրագիրը ենթադրում է երկարաժամկետ արդյունքներ և ներդրումների հնարավորություններ, որոնք նոր ծառայությունների , սպասարկման ոլորտի զարգացման, հետևաբար՝ նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորություն են ստեղծելու: |

| | |
|---|---|
| քանակը և դրանց նկարագրությունը | ✓ Շինաշխատանքներում կներգրավվեն 37-ից ավել աշխատողներ<br>*Նպաստավոր պայմաններ կստեղծվեն նոր բիզնեսների համար:* |
| Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը | *Նախորդ տարվա բյուջեն՝* ***1 018 013 200*** *ՀՀդրամ .*<br>*Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:* |

| | *Պլան* | *Փաստացի* | *Տոկոս* |
|---|---|---|---|
| ***Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները***<br>*Այդ թվում՝* | 1 250 873 439 | 1 316 466 824 | |
| *- Վարչական բյուջեի եկամուտներ, որից* | 1 018 013 200 | 1 083 606 585 | 106 |
| *- Սեփական եկամուտներ* | 253 659 700 | 250 294 985 | 99 |
| *- Ֆոնդային բյուջեի եկամուտներ* | 232 860 239 | 232 860 239 | 100 |
| ***Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր,***<br>*որից* | 1 477 634 678 | 1 239 034 438 | 83 |
| *- Վարչական բյուջեի ծախսեր* | 1 022 185 300 | 783 585 060 | 76 |
| *- Ֆոնդային բյուջեի ծախսեր* | 455 449 378 | 455 449 378 | 100 |
| ***Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը,*** *որից* | | 455 449 378 | |
| *- Ճանապարհաշինություն* | | 138 905 751 | |
| *- շրջակա միջ. պաշտպան.* | | 256 866 045 | |
| *- ջրամատակարարում* | | 49 120 377 | |
| *- բնակ. շինարարութ.* | | 1 870 000 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | - նախադպրոցական կրթ. | | 7 278 405 | |
| | - գույքի և սարք. ձեռքբեր. | | 1 408 800 | |
| | | | | |

**Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն**

*2021թ.-բյուջեն **1 205 517 000** ՀՀ դրամ ,*

*Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

| | Պլան |
|---|---|
| **Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում**<br>Այդ թվում՝ | 1 979 707 700 |
| - Վարչական բյուջեի եկամուտներ, որից | 1 205 517 000 |
| - Սեփական եկամուտներ | 238 665 300 |
| - Ֆոնդային բյուջեի եկամուտներ | 769 997 400 |
| **Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր,**<br>որից | 1 979 707 700 |
| - Վարչական բյուջեի ծախսեր | 1 205 517 000 |
| - Ֆոնդային բյուջեի ծախսեր | 769 997 400 |
| **Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը,** որից | 769 997 400 |
| - Մեքենա սարքավորումների ձեռքբերման | 2 000 000 |
| - Ճանապարհային տրանսպորտ | 632 000 000 |
| - Շրջակա միջավայրի պաշտպանություն | 32 000 000 |
| - Ջրամատակարարում | 20 000 000 |
| - Բնակարանային շինարարություն | 83 997 400 |

| | |
|---|---|
| **Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով** | **2021թ. բյուջետային տարում համայնքի բյուջեի ֆոնդային մասի մուտքեր կանխատեսվում են շուրջ 394 724 840 դրամի չափով, որոնք ձևավորվում են համայնքի սեփականությունը հանդիսացող ֆոնդերի օտարումից (հողի օտարումից), պաշտոնական դրամաշնորհներից և այլ նվիրատուներից:**<br><br>**Ընդամենը ֆոնդային բյուջեի ծախսերը կանխատեսվում է՝**<br><br>**499 786 798 դրամ, որից՝**<br><br>2 000 000 – Մեքենա սարքավորումների ձեռքբերման<br><br>20 000 000 – Նախագծահետազոտական աշխատանքների համար<br><br>477 786 798 – Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում<br><br>**351 786 798 – Սուբվենցիոն ծրագրերի ֆինանսավորում՝ որից**<br><br>116 448 778 – Արտաշեսյան փողոցի (Մամիկոնյան փողոցից մինչև Թումանյան փողոց 950 մ հատված) վերանորոգում և ասֆալտապատում<br><br>64 838 021 - Գորիս համայնքի Մաշտոցի փողոցի 230մ հատվածի և Դիտակետի ճեմուղու 450մ հատվածի ասֆալտապատում<br><br>170 500 000 - Գորիսից Ակներ բնակավայր տանող մոտեցման երկրորդ գլխավոր ճանապարհի հիմնանորոգում |
| **Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝** | 310 000 000 *ՀՀ դրամ (100%)* |
| **Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը** | 170 500 000 - *(55%)* |
| **Այլ ներդրողներ** | *..........ՀՀդրամ ( .... %), նշել ներդրողի անունը:* |
| **Ծրագրի իրականացման տևողությունը** | *Սկիզբը 01.06.2020թ. Տևողությունը՝ 6ամիս* |
| **Ծրագրի ծախսերը** | *ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով նախագծանախահաշվային փաստաթղթերը կցվում են :* |

| Ամսաթիվ | 03.01.2021թ. |
|---|---|

Այլ տեղեկություններ ծրագրի մասին
Համայնքի տնտեսական պատասխանատու Իրինա Յոլյան
Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը yolyan.irina@gmail.com

Համայնքի ղեկավար Առուշ Առուշանյան